

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Վրացի, Իրական, Քաղաքական, Գիտական,

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

6 ՄԱՅԻՍ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական նշաններ	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Արեղաձագն յԱրմառ	ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻՋԱԿՅԻ
Ներդառնակութիւն եւ նուագակցութիւն	ԳՐ. ՄԱԼԽԱՍ
Վ. յին բանաստեղծութիւնները	Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Լիէս (Բանաստեղծութիւն)	ՅՐԱՆՍՈՒԱ ՔՕՔԷ

ՅՐԱՆՍՈՒԱ ԳԷՊԻ ՊՐԱՋԻԼԻԱ

(ՏՕՔԹ. ԼԷՈՒՐՆԱԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հառտուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը տարեկան վճարելի է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները, կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Ձեռն-ԳԵ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաւոր թիւ

Թիւը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելիէն դարձած է, այնքան բաղաժաթիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լուր ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն սմանք Նշանաւոր են իր արտադրութեամբ եւ քաղցրաւոր, սմանք ալ թէեւ նոյնքան արտադրելի համառութեամբ, գերազանց են սակաւ իր կաշուի ու գործուցելի. վերջապէս իր քանակիւր թէյ իր ուրոյն յաւանութիւններն ունի որոնք զինքը կը զանազանեն ուրիշ տեսակներէ:

Սակաւ կալ թէյ մը, որ այդ յաւանութեանց մէջէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համառութեամբ եւ մոտաւոր կաշուի ու գործուցելի անգույնութիւն մը, եւ այդ թէյն է ձաքոնի րեյը, որ այդ յաւանութեանց շնորհիւ կը յարմարի մէջն արտադրի ու կաշուութեան, մէջն կլիմայի եւ եղանակի եւ մէջն հաշակի:

Սալբուրեան եւ Իսապուրեան րեյի մեծ վաճառատունը, իր բաղաժաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է հարստեան զուտ թէյ մատուար եւ գեղեցիկ տափերով ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփոքին ունենալ թէյ մը

Համով, հոտով, անողոքապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հեղուկ, չիւսկան, Սէյլան եւ ձալայի ամենալու տեսակ թէյեր:

1—10

Ուսարուրիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուժ եւ կնիստաբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարեւան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յորդայ յաճախորդներուն թէ՛ բնականորէն փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18, Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթոտներով շղային եւ հագեկան ու երեւակայական մէջն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անաւանաւած աչքի երեօթի եւ սուրբու ազեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յաւաջ եկած շղային խռովումները եւ երիտասարդական մայրքները, ինչպէս նաեւ գինեմուրիքը, մորիֆունամուրիքը եւ այլն: Կիրակիներէն զատ մէջն օր կէսօրէն սգեւալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ սուրբ օրերը ձրիաբար կը դարմանէ վկայեալ ազքաւաները: 1—10

ԱՐՐԱՀԱՄ ԿՏԱԻՃԵՄՆ

(Ն Ի Կ Ո Մ Ի Դ Ի Ա)

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ապահովագրութիւններ, մէջն տեսակ գործիքի գործեր, առեւտրական գործերու վերաբերեալ ազգայնական յանձնարարութիւնք՝ Կ. Պոլսու մէջ պատրաստելի. քաթարվիդիս եւ այլն:

ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ՝ մասական վաճառումով՝ Սաքսոնիոյ դաշնակներ, տափաղան առեւտրական գործեր, պիտիքութիւններ եւ այլն: Ուղղութեամբ քանակութեամբ եւ տեսակով՝ ընտրի ու հաւաքեալ թէյեր:

Շրջակայ գաւառականներու առեւտրական յանձնարարութիւնք եւս կը կատարուին փութով:

5—10

Հաւցէ

ԱՐՐԱՀԱՄ ԿՏԱԻՃԵՄՆ ԻԶՄԻՏ

ԱՅՍ ԿԼԻՄԱՅԻ ՄԷՋ

Ընդհանուր վիշտեր կան որոնք այս աշխարհածանօթ գեղով կատարելապես կը բժշկուին:



SCOTT'S EMULSION

Հաղ, հարբուխ, և բոլոր որկորի և թոքի վիշտեր, ինչպէս թոքացաւ, և պրծնշիտ, շնչառութեան և կուրծքի երակներուն փորփոգումը և միւս տկարութիւնն պատճառող անհաստատութիւններ՝ անմիջապէս կը զսպուին, և կը տկարացուն և վերջապէս կը բժշկուին: Կամանաւնդ ծիւրական ակտի նկատմամբ՝ առաջին նշանները տեսնուած ատեն, անմիջապէս առաջը կ'առնէ: Եթէ ընտանիքի մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք է գեղարան մը գիմել և

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

մը առնել: Ըսգօթի Բաղադրութիւնը այս աղետը կը դադրեցնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականգնէ:

Քիչերու վրայ ասոր ուշադրութիւնը ընել պէտք է:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները կը ծախեն:

PHOENIX ASSURANCE Ld. Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆԾՈՆ 1782 ԻՆ

ՈՒ ՓՈՐՄԻ Ի ՓՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎՈՐՈՎԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս ընկ. հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ և փնտույց մէջ իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի և կայծակի դէմ ամէն տեսակ անշարժ և

շարժուն ուսացումք, յոյժ նպատակով պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է. ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ և ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Ց-ՊԵՂ ՎՃԱՐՈՒՄ Ե ԶԱՆԿ ԶԱՆ 27,000,000 ԹԵՂ. ԴԵՂԻ:

Ընդհ. գործակալ Պօլ-Յոյ և գաւառացի: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ Վիքայիս խան, Պանֆ Օքսմանի մօտ Ղալաթիա:

Փոխ գործակալ Ի Պօլի-ՃիվԱՆ ԹԵՔԵԵԱՆ
1-10 Գնացիւան խան

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալածա-Սերայի Լիւսին դէմ
Դե. Նե. Շք. օրերը անաւոսեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11½
Բե. Դե. Ուր. օրերը ճէն մինչեւ 11½
Կիլալի օրերը ժամագրութեամբ 1-10

ՄԱՍԻՆ

55^ր ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

6 ՄԱՅԻՍ 1906

ԳՐԱԿԱՆ ՆՁՄԱՐՆԵՐ

ՀՈՎՈՒՆԵՐԳ-ՈՒԹԻՒՆ ՄԸ

Լրագրական կեանքի առօրեայ պայքարներու, մրցակցական քինախնդրութիւններու, և մաղձ ու զայրոյթ ժայթքեցնող յողուածնեւորու մէջտեղ, — որոնք ուրիշ որ և է թերթէ աւելի Մասիսին շուրջը կը պտուտքին այս միջոցիս, — անոյշ ու կազդուրիչ տպաւորութիւն մը կը թողու սրտիս ու մտքիս վրայ՝ փոքրիկ սիրուն հատոր մը, Առաջին Սեք, կարդալով մանաւանդ անոր ճակատը երիտասարդ աշխատակցի մը անունը, Ժագ Սայապալեան («Փայլակ»), որ մինչև երկու տարի առաջ այնքան զգայուն ոտանաւորներով կը թրթռացնէր այս էջերը։ Ինքը մեկուսացած մը եղաւ անկէ ի վեր, բայց ո՛չ բերեք հրաժարող մը գրելէ, ինչ որ դեռ շատ կանուխ պիտի համարուէր իր թարմ հասակին համար։ Ու հիմայ, տեսնելով իր այս վիպակը, — հովուերգական սիրոյ մը պատմութիւնը, — կըմտնեն մարտաբան իր մեկուսացումին որ նորէն գրականութեան նուիրուած է եղեր, — այս հատորիկին պատրաստութեան ու տպագրութեան։

Ու կը կտրատեմ էջերը, հաճոյքով մը և հետաքրքրութեամբ մը զոր քիչ անգամ զգացած եմ այս որքա՛ն ատենէ ի վեր, խմբագրական գրասեղանիս վրայ վարժուած չլլալով տեսնելու դասագիրքէ, աշխարհաբար շարականի պէս տետրակներէ, անպէտ անիմաստ հեղինակութիւններէ ուրիշ որ և է հրատարակչական գործ։ Հազիւ կոնքուռնեւորուն «Ունէ Մորթուէն»ը եկաւ քիչ մը պէս պիտութիւն ընծայել այս միօրինակութեանց մէջտեղ, ու հակառակ իր յարուցած աղմուկներուն, կը մնայ միշտ անորոշով կարդաց-

ուելիք գործ մը, լաւագոյն ու ինքնատիպ արտադրութիւններէն մէկը ֆրանսական գրականութեան։

Առաջին Սեքը, ինչպէս իր անունէն ալ կերեւայ, ո՛չ գայթակղական գրուածք մըն է՝ ո՛չ... տիրացուական։ Լերկ անապատին մէջ ընդնմարուող դաւարագեղ ովասիսին, վճիտ ջուրի աւազանին տպաւորութիւնը կը թողու անիկայ, մաքուր, զովարար, որ պարտասած ուղեւորին դէմքը կը պայծառացնէ ու պապակոտ շրթունքները կը խայտացնէ։ Որքա՛ն յոգնածներ, յափրացածներ, այս տպաւորութիւնը պիտի կրեն՝ ինքզինքնին փոխադրուած զգալով յանկարծ, անոր ընթերցման պահուն, Հալքիի եղեւիններու տիրաստուեր պուրակին մէջ, դէպի ծովեզր տանող խաղաղ բլրակին վրայ, քրոջ — եղբոր մը խօսակցութեան ունկնդրելով։ Երիտասարդ հեղինակը այնքա՛ն կենդանի պատկերացումներ կուտայ իր գրչին, որ նկարագրած տեսարանը բնական ու խօսակցութիւնը իրական կարծելու հմայքը կուենանա։ Ի՜նչպէք, իրողութիւն շատ քիչ կայ հոն, գրեթէ բնաւ լուռ պաշտումի մը պատմութիւնն է այս գիրքը, եթէ երբեք պատմութիւն կրնայ ունենալ սէր մը որ աչքերով կ'արտայայտուի ու սիրտէ սիրտ կը փոխանցուի անխօսուկ, քսան տարեկան հասակին մէջ։

Տիրքան, իր ուսանողութեան թուականին, փոքր Ասիոյ Ամբրիկեան գոյէճներէն մէկուն մէջ կը սիրահարի Միս Իգապէլ անուն մանկամարդ ու գեղանի Գանատուհիի մը որ տեսուչին տիկնոջ ազգականներէն էր և վարժարանական յարկին տակ կը բնակէր։ Համակրութիւնը փոխադարձ կ'ըլլայ, առա՛նց օսկայն արտայայտուելու. ու այդ հովուեր-

գական վիճակին մէջ կը շարունակուի մինչեւ այն օրը ուր ուսանողը իր վկայականը առած՝ կը հարկադրուի թողուլ գոլէճը, վշտաբեկ, սրտատրոփ։ Ու մեկնումի առտուն կիմանայ յանկարծ թէ Միս Իզապէլ իրմէ առաջ գացեր է, առջի իրիկունը, ողջերթի ու բաժանման դառնութիւնը խնայելու համար երկուքնուն։ Երեք տարի վերջը, նորէն զիրար կը գտնեն Իզմիրի մէջ, միշտ նոյն վերապահ ու չարտայայտուող սիրոյն մէջ վայելք մը գտնելով, իրարու հանդիպելէ, խօսակցութենէ, պտոյտէ, նայուածքներէ միայն հաճոյք զգալով։ Տիգրան կը պարտաւորուի Պոլիս գալ, իր գործերուն պատճառաւ, ու չոգենաւին մէջ նորէն կը գտնէ իր պարիկը՝ Միս Իզապէլը որ զբօսաշրջիկներու խումբի մը կ'ընկերանար. պատրուակ մը արդեօք՝ երիտասարդին հետ ճամբորդելու։ Յետոյ, Գանատուհին կը մեկնի կերթայ, այս անգամ բոլորովին անյայտ ըլլալու համար, առանց հետք մը ձգելու։

Ահա՛ բոլոր պատմութիւնը։

«Ան իր ճամբան պիտի երթայ այլեւս կեանքի մէջ—կը գրէ Տիգրան—եւ ալ իմս. երկու ճամբաներ պահ մը իրարու քով գալէ յետոյ, կը հեռանային կրկին—անծանօթ ճամբաներ որոնք ո՛վ գիտէ ո՛ւր պիտի տանէին ամէն մէկերնիս։ Իմ ճամբաս սակայն հիմայ—կեանքիս ճամբան այնքան մուծ, այնքան սև, այնքան արհաւիրից էր որ քայլ մը իսկ առնելու կը վախնայի...»։

Հալքիի պուրակին ստուերներուն տակ՝ երիտասարդի մը կողմէ իր քրոջը պատմուած կեանքի այս դրուագը, լուռ սիրոյ մը այս խոստովանութիւնը, տարիներ վերջ, իր թաղածութեան մէջ գրաւելի տպաւորիչ բան մը ունի, զոր սեպտիկ մը՝ մաքուր սիրոյ չհատացող մը անգամ պիտի զգար։ Ընթերցողը այն տպաւորութիւնը կը կրէ, իբր թէ ինքն ալ ակնատես, մասնակից եղած ըլլար այս դրուագին։ Վէպը կ'աւարտի ոտանաւորեն. բով ու քանի մը նամակներով որոնք կ'ամբողջացնեն զայն։ Սահուն, խնամուած աշխարհաբար մը, նկարչագեղ պատկերներ ու զգայուն խոհեր յատկանիշը կը կազմեն ժագ Սայապալեանի այս անդրանիկ հատորին որ

համակիր ընթերցողներ գտնելու արժանիք ունի, իր պարզութեանը մէջ։ Պիտի ուղէնք խօսիլ երիտասարդ հեղինակին վրայ ալ, եթէ,—գեղեցիկ գուգադիպութեամբ մը,—այդ հոգը ստանձնած չըլլար Մ. Ա. Պարսամեան իր «Վ.ին բանաստեղծութիւնները» յօդուածով զոր հրատարակած ենք Մասիսի այս միեւնոյն թիւին մէջ։

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հովուերգութենէն ետք՝ իրական կեանքը։ Երիտասարդ բանաստեղծէն ետք, որ իր ապագային կը ժպտի, ծերունի արուեստագէտը՝ որ արտում նայուածք մը կ'ուղղէ դէպի անցեալը, Զափրաստճեանին վիճակը դառնացած է՝ իր զաւկին մահէն ի վեր։ Հէգ դերասանը, իր սուգին ու չքաւորութեան տառապանքին միացած կը տեսնէ հիմակ հիւանդութիւնն ալ որ զգետնած է զինքը։ Ու աւելի կարօտ կը դառնայ հոգեկան սփոփանքի եւ նիւթական նպաստի, որուն վրայ հանրային կարեկցութեան քանիցս կոչում ըրին օրաթերթերը։ Այդ հրաւերը բոլորովին անարձագանգ չմնաց։ Բայց եղած նպատակները, անշան քանակութեամբ, ո՛չ իսկ կը բաւեն ընտանիքի մը ապրուստը ապահովելու, գէթ առժամապէս։

Անոնք որ ատենօք ծափահարած են Զափրաստճեանը բեմի վրայ ու մասնակցած են անոր առաջ բերած ծիծաղներուն, դալկահար արուեստագէտին ծիւրած այտերուն վրայ հիմակ ալ իրենք ժպիտ մը առաջ բերելու պարտականութիւնը ունին։ Եւ այդ ժպիտը գիտենք թէ ինչօ՞վ ու ինչպէ՞ս կը նկարուի եթէ երբեք ժպտելու տրամադրութիւնը մնացած է հէգ դերասանին քով։ Իբր թէ նիւթական կարօտագին վիճակը բաւական չըլլար, զաւկին կորուստը կուգայ աւելի դառնացնել զայն։

Եթէ մարմնով տակաւին առոյգ ըլլար Զափրաստճեան ու բեմական գործօն ծառայութեան մէջ, գուցէ ինքն ալ իր հայրական սուգին տաք վայրկեանին գտնուէր այն անուշիկօրէն եղական կացութեան մէջ որ անգամ մը պատահած է Թովմաս Փասուլեան ճեանին։ Կովկասի մեծ քաղաքներէն մէկուն

մէջ, ուր tonrnee մը կը կատարէր դերասանական խումբը, Ադամեանին փայլուն մասնակցութեամբ, չքեղ երեկոյթ մը կազմակերպուած էր ի նպաստ Փասուլեանեանին որուն աղջիկ զաւակը ծանր հիւանդ էր: Ներկայացման քանի մը ժամ մնացած, պըզտիկը հոգին կ'աւանդէ. այր ու կին ընկճուած կը մնան. ո'չ իսկ արտասուելու ժամանակ ունին. թատերասրահը լեցուիլ սկսած է անդին և թատերապետը ստիպողաբար լուր կը զրկէ՝ անոնց յապաղելէն չփոթած: Վայրկեանը վճռական է և վարանելու միջոց չի թողուր. հօր և արուեստագէտի զգացումները կատաղի պայքար մը կը՝ մղեն իրարու դէմ՝ Փասուլեանեանի սրտին մէջ:

Վերջապէս կ'որոշեն չյայտնել աղէտը. դերասանապետը իր ողբերգական է'ն սարսուռազդեցիկ դերը կը կատարէ այդ վայրկեանին, հոն՝ իրենց ճամբորդի խցիկին մէջ, ուր սաւան մը կը ծածկէ փոքրիկ մեռելակին սառած մարմինն վրայ, ու աչքերնին սրբելով՝ այր ու կին կը մեկնին դէպի թատրոն: Ներկայացումը փառաւոր կըլլայ, և Փասուլեանեան մոլեգնաբար կը կատարէ իր դերը, ծափերու և կէցցէններու գոռումբին մէջ խղդղելով իր ցաւը: Յաջորդ օրը միայն գոյժը կը տարածուի քաղքին մէջ և առջի գիշերուան հանդիսականները՝ ներկայացման չափ փառաւոր յուզարկաւորութիւն մը կը սարքեն: Ասիկայ գէթ սփոփանք մը կըլլայ Փասուլեանեանին ու կնոջը համար:

Ինչ պիտի ըլլայ սփոփանքը Զափրաստեանին որ հասուկ զաւակ մը կորսնցուց, անշուք անչուկ կերպով հողին յանձնելով զայն, աղքատիկ թաղումով. ու Սկիւտարի գերեզմանատունէն վերադարձին, առաջին մտածումը եղաւ թէ... Ինչ պիտի ուտեն այն գիշերը: Իր հայրական սուգը՝ հանրային կարեկցութեան արժանանալու նոր իրաւունք մը կուտայ իրեն, իբրեւ վաղեմի արուեստագէտ իր ունեցած ակնկալութիւնէն զատ, — եթէ ո'չ իրաւունքէն: Անօթի մեռնող վարժապետներուն համար Հանգստեան ու Նըպաստի Սնտուկ մը հաստատուած է գէթ. մեր չքաւոր դերասանները լրագրութեան անկեղծ հրաւէրը միայն ունին իրենց ապաւէն, այս տեսակ դժբաղդ օրերու համար: Եւ Մասիս, որուն էջերը համակիր տողերով լեցուցած ենք, շատ տարիներ առաջ, Զափրաստեանին և իրեն ժամանակակից դերասաններու բնական յաջողութեան նուիրուած, ջերմագին ու սրտագին կերպով կը

ձայնակցի հիմակ՝ իր պաշտօնակիցներու հրաւէրին, որդեկորոյս ու չքաւոր կատակերգակին ի նպաստ:

«ՄԵՐԼԱՊՈՐԵԱՆՈՅ» ԳՐՈՒԱԾՔՆԵՐԸ

Վերջին վայրկեանին կըստանամ Արեւ. Մամուլը ուր Պ. Յարութիւն Ալիբար (Քրիզանթէմ) գործադրած է իր լրագրական մեծադորդ սպառնալիքը, քանի մը հատուածներ զատելով ու հրատարակելով՝ երկու — երեք տարի առաջ իրեն ուղղած անձնական նամակներու մէջէն: Procédésին ըսելիք չիկայ և իբրեւ նմոյշ կրնայ ծառայել հրապարակագրական délicatesseի: Առաջին տպաւորութեամբ՝ պիտի յայտարարեմ իրեն, թէ իր ակնկալած ջախջախիչ տպաւորութիւնը առաջ չի բերաւ իր այդ «ազնուահոգի» ընթացքը: Իմ մասիս, չկրցայ խնդուքս զսպել, մտածելով թէ քրոնիկագիր մը որ 14—15 տարիէ ի վեր իր գրիչը յատկացուցած է առ ու ան ծաղրելու, հեգնելու, ինչպէ՞ս պաշարիւնը չունենար տոկալու որ իր «մերկապարանոց» գրուածքներն ալ խնդրի նիւթ ըլլան մամուլին մէջ, այն բարեկիրթ ոճով զոր գործածեցին Տիար Թաւադեանեան ու Մաքիսի խմբագրութիւնը: Ու կը զայրանայ, կը փրփրի, ինքնապաշտպանութեան այն տեսակ եղանակ մը ընտրելով որ շատ հեռու է իր espritին համապատասխանելէ և աւելի կը մօտենայ... ridiculitéի սահմաններուն:

Պիտի փափաքէի միայն, որ իմ «դրուատական»ներէս ինքզինքին réclame փնտռելու պահուն, մոռցած չըլլար նաև հրապարակելու այն նամակներս կամ նամակի հատուածներս՝ ալ որոնցմով հաղորդած եմ իրեն, շարունակ, ընթերցողներու զանգատները իր այս կամ այն «վրան բաց» գրուածքին համար, կատարած սրբագրութիւններս, յապաւումներս, ներկայանալի վիճակի մէջ դնելու համար զանոնք. և մանաւանդ դէպք իր այն քրոնիկներուն զորս մերժած, եւ դարձուցած եմ իրեն, որովհետեւ պատշաճութեան սահմանները ոտնակոխ կընէին բոլորովին:

Այս տեսակէտով, համակարծիք չեմ իրեն երբ կը վճռէ. — «Կարծեմ թէ այսքանը կը բաւէ»: — Ո'չ, չի բաւեր, ու պէտք է որ նորէն տեսնուինք:

ԽՄԲԱԳՐ. «ՄԱՍԻՍ»Ի

ԱՐԵՂԱԶԱԳՆ ՅԱՐՄԱՇ

(ԿՅԿՏՈՒՐ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ)

Շատ հին ատեն ծանծաղամտութիւն մը կար, փիլիսոփայական ծանծաղամտութիւն: Կարգ մը իմաստասիրական դպրոցներ իրարու դէմ կը մրցէին, կրկին կը պնդէին և կրկին կը զիջանէին, կը հաշտուէին կը պագտուէին, յետոյ նորէն իրար կը խածնէին. ի՞նչու.— վասն զի խնդիր էր թէ մարդ արարածը ի՞նչ տեսակ կենդանի է:

Դպրոց մը կար Ստոյիկեան, որ կը պնդէր թէ մարդ արարածը անասունէ տարբեր խելք ունի, մարդ և անասուն իրարու հաւասար են: Ուրիշ մէկ դպրոց մը կար Եպիկուրեան, որ կը ճառէր թէ մարդ արարածին խելքը անասունի խելքէն չափով մը վեր է, այլ սակայն անասուն է ան: Ուրիշ դպրոց մը, Շնական, կը պնդէր թէ մարդ արարածը ոչ խելք ունի և ոչ միտք, անբան է և անբանական: Միայն Պլատոնականք կը պնդէին թէ մարդ արարածը ոչ թէ՝ բնական, այլ ստացական խելք ունի, իսկ ձեմարանականք կը հակառակէին թէ մարդ արարածին խելքը միայն ստացական չէ, այլ աւելի բնական է:

Ուր ուրեմն յաղթանակը տարած էին Բանաւորականք, պնդելով թէ մարդն է կենդանի բանական: Բայց յանկարծ ամէն բան յեղաշրջեցաւ, նոր վէճ մը, նոր առարկ մը կամ առաջարկ մը բոլոր մտքերը յուզեց վրդովեց, թէ բանական կենդանի մարդը ի՞նչ ձեւով կենդանի արարած է, և ա՛յա ամէն բերան իրարու դէմ մրցելով, իրար համոզելով ու լուրջելով՝ հռչակեցին տարածեցին ծաւալեցին հրատարակեցին վճռեցին բանաձեւեցին և սահմանեցին թէ մարդ արարածն է բանական կենդանի, այլ երկոցանի կենդանի:

Հռչակաւորն Տիոգինէս, որուն համար աշխարհիս մէջ իր կարասէն զատ ուրիշ բան չկար, որ կ'արհամարհէր մարդկային ամէն կարգ ու սարք, և չէր ընդուներ ո և է վիճակ, ոչ

ընտանեկան և ոչ ընկերային, այսօրինակ ծայրայեղութեան մը դէմ բարկանալով, հաւմը մորթեց փետեց և տարաւ նետեց զայն այդ փիլիսոփաներուն երեսին, ըսելով. «հա՛մ ձեր երկոտանի կենդանի մարդը, թէ՛ն ոչ ոք զգաստացող եղաւ այս հեղ. նութենէն, այլ սակայն երկոտանի մակղիրն յետոյ տրուեցաւ այն մարդերուն, որք իբր կէս-մարդ կ'ապրէին, այսինքն կը մերժէին ամուսնութիւնը, ամուրի կ'ապրէին, առանց գոնէ ամուրի ապրած ըլլալու «վասն ար. քայութեանն Աստուծոյ»:

Ամուրի կեանքը ընկերային չըջանակի մէջ հին ատեն մուտք չունէր, ընդհանուր առած էր թէ մարդ կա՛մ կարգուելու է կա՛մ վարդապետ ըլլալու է: Այլ որովհետեւ վարդապետ ըլլալ չուզողներ կային և վանքի մը անկիւնը քաջուած ճգնութիւնը նախա. մեծար կը համարէին, ուստի սիրայօժար կը նախընտրէն երկոտանի անարգ անունով մկրտուիլ, քան վարդապետ ըլլալ, և այս. պիտիներն արդարեւ շատ անգամ հազար ան. գամ կ'արժէին սարկաւազէ ու վարդապետէ աւելի բարի եւ բարեբար:

Արմաշն ալ ունէր երկոտանիներ, որոնց մին էր ան, որ Վահան վարդապետի խուցն ափ առած՝ յուշիկ յուշիկ դռնակին կը զարնէր:

«Թըք, Թըք»:

— Ո՛վ է ան:

«Թըք, Թըք, չե՛ս գիտեր թէ ո՛վ եմ»:

— Չիտեմ. ո՛վ էք:

«Երկոտանին եմ»:

— Երկոտանի:

«Այո, եւ Աղաւնիին եեկեցը»:

— Աղաւնի՛ի եւ երկոտանի՛ի: Ուրեմն խորովու էք:

«Հին «Անգիր» է մը ուսած եմ»:

Ուտեմ ես քեպպալը,

Խմեմ գինու թասը.

Սիրականիս պազնեմ թուչը,

Անուշ ընեմ անոր նուչը:

— Օհօ՛. աչուղ մըն էք ուրեմն:

«Եւ զօղլու»:

— Մտէք ուրեմն. «զի այս դուռն Տեառն է եւ ընդ սա արդարք միայն մտանեն»:

Գիրուկ ու խոշոր աչուի, կարճհասրակ մէկն էր ան, որ կը մտնէր, օղիի փարջով մը, տասն հաւկիթ հրամէք—մէզէ—բերելով եւ ըսելով.

«Գիտէ՞ք, ես ո՛վ եմ»:

—Երկոտանի մը:

«Ուրիշ ո՛վ եմ. գիտէ՞ք»:

—Աղաւնիի մը ձագուկը:

«Եւ ուրիշ ո՛վ եմ, գիտէ՞ք»:

—Ալ չիտեմ:

«Զարմանք, չէ՞ք գիտեր հա՛րուսն մականաւնս»:

—Ի՞նչ գիտեամ պէ՛. եթէ երկոտանի մը չէք, չորքոտանի մը ըլլալու էք:

«Ան ես չեմ. Արսէն վարդապետն է, որ զիս միշտ կը նախատէ՝ անուանելով զիս «Գրք-եալան»:

—Ուրեմն Գրք-եալանն էք դուք:

«Այո, բայց խմէ»:

—Խմե՛մ. սա Գրք-եալանն էք դուք, որ բոլոր Բիւթանական աշխարհը համբաւով ձանձրնած էք:

«Այո, ամէն ծակ ծուկ մտած ելած եմ, ոչ թէ Պրուսա, Իզմիր, Իզմիր, եւ Էնկիւրիւ, այլ ամբողջ Ստամպուլն ու Էտիրնէէն անդին»:

—Եւ միշտ սուտերո՞վ:

«Այո, սուտերովս, այլ միշտ Զար-խափանը քարոզելով եւ չարը խափանելով աւանգ, որոնք սուտերս իբր իրաւ կը կլկէին, հիմա ուրեմն ճիշդն ըսեմ. գիտէ՞ք, ես ո՛վ եմ»:

—Ըսի եա, երկոտանի մըն էք:

«Աղէկ. ըսէ ուրեմն, անոնք որոնք այս վանքին մէջ չորքոտանի ապրած են, ի՞նչ ըրած են այս վանքին»:

—Դուք ի՞նչ ըրած ունիք:

«Տաճարը չինած եմ»:

—Սա ձեր Սողոմոնի տաճարը, որուն գմէթը խախուտ է. Ան ալ թող Օրմանեանը ճարճարակ ընէ:

«Բայց գիտէ՞ք թէ ես ուրիշ ո՛վ եմ»:

—Աղաւնիին ձագուկը:

«Գիտէ՞ք, ո՛վ էր այդ Աղաւնին»:

—Ի՞նչ գիտեամ:

«Այդ Աղաւնին մեր հին Պատրիարքներուն գորտ»:

մէջ ամէնէն մեծ Պատրիարքն էր, Պրուսայի եւ Իզմիրի առաջնորդն էր:

—Բայց քեզի ի՞նչ:

«Ես ալ անոր քեռորդին եմ»:

—Անոր քեռորդին ըլլալովդ ի՞նչ եղած կ'ըլլաս:

«Ի՞նչ եղած կ'ըլլամ. տաճարը չիներ եմ, ալ ի՞նչ կ'ուզէիք որ ըլլամ»:

—Սուտերո՞վդ չինեցիր այդ տաճարը:

«Սողոմոն ի՞նչով չինեց տաճարը:

—Աստուծոյ շնորհօքը:

«Աֆէրիմ. բայց գիտե՞ս, քանի՞ տարուան մէջ չինուեցաւ այդ տաճարը»:

—Բրիստոս կ'ըսէ թէ քառասուն եւ վեց տարուան մէջ չինուեցաւ»:

«Աֆէրիմ. բայց Բրիստոս ի՞նչ ըսաւ այդ տաճարին. հաւնեցա՞ւ:

—Բակեցէք, ըսաւ, այդ տաճարը եւ երեք օրուան մէջ նորէն չինեմ:

«Թող ինք քակէր եւ յետոյ ուրիշին թող չինել տար»:

—Օհօ. աֆէրիմ, Գրք-եալան. Աստուածաբանութեանդ ըսելիք չկայ. սքանչելի:

«Բայց գիտե՞ս, ես ի՞նչ եղայ հիմա»:

—Ի՞նչ եղար:

«Բանի մը տղեկներու, սըկէ նըկէ հաւքըտուքներու գիշերապահն եղած եմ, այս ըլլալու էր վարձքս:

—Այդ չհաւնած տղեկներդ ժառանգաւոր են:

«Ի՞նչ, ժառանգ պիտի ըլլան ատոնք վանքի կովերուն, էշերուն, դոմէշներուն, և ես ատոնց գիշերահա՛ւը պիտի ըլլամ»:

—Ի՞նչ կ'ուզես նէ, ան եղիր. Անոնք ժառանգ են, իսկ ես, դուն և Արսէն վարդապետ խորթ, կորդ, ճորտ...

«Եւ գորտ»:

—Բառդ սքանչելի և գիւտդ հիանալի, ո՛վ Գրք-եալանս. եւ ըստ այդ գիւտի՝ ոչ թէ երկոտանի մը եղած կ'ըլլաս, այլ և երկակենցաղ կենդանի մը:

«Երկակենցաղ ի՞նչ ըսել է»:

—Զուրի և հողի վրայ ապրող կենդանի, գորտ:

«Գորտ. չըսե՞ս ուրեմն. ես գորտ եմ
այս վանքին մէջ»:

—Գուցէ:

«Թող ըլլամ գորտ, այլ սակայն տաճարը
չինքն եմ»:

—Որպէս Գալիլէոս կ'ըսէր. «այլ սակայն
երկիրը կը շարժի»:

«Այո՛, թող շարժին երկիրնք ու երկիր,
այլ ես տաճարը չինքն եմ»:

—Բայց կ'աղայեմ, ա՛լ կարճ կապեցէք,
ըսէ՛ք. եթէ դուք չինեցիք տաճարը, ի՞նչ-
պէս չինեցիք:

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԷՐ—ՄԻՆԱՍԵԱՆ

(Յաջորդով)

ԿՕՆԳՈՒՌՆԵՐՈՒ ՇՈՒՐՋԸ

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՆՈՒԱԳԱԿՑՈՒԹԻՒՆ

Ներկայ վիճաբանութիւնը որ, ըստ երեւոյթին, անել ճամբու մը մէջ մտաւ, պէտք է որ վերածուի իր ամենապարզ արտայայտութեանը և անկէ վտարուին չփոթութեան բոլոր տարրերը: Եւ չփոթութիւնը ծնաւ վերի կրկին բառերուն թերի ըմբռնումէն, սխալ մեկնութենէն: Ով որ խնդրոյն քովէն կ'անցնի՝ փոխանակ զայն խորաքննին ակնարկով լուսաբանելու, բնականաբար իր ընդդիմախօսին կը վերագրէ երկչոտութիւն, նենգութիւն և ասոնց նման անտեղի և անարդարանալի հակումներ:

Ներդաշնակութիւնը հին գաղափար է, բայց ո՛չ հինցած: Նուազակցութիւնը նոր է: Դասական հեղինակներէն գլխաւորաբար Ռասին, Պոսիւէ, Ֆէնէլոն տիպարներ են խիստ ներդաշնակ գրողներու: Այս դասական ներդաշնակութիւնն է զոր Պուալօ հռչակեց իր քերթողական Օրինագիրքով: Յետագայ դարերուն մէջ, Պիլֆօն, Շաթօպիան, Լամառթին և Ֆլօպէռ դարձեալ իբր օրինակելի տիպարներ ցոյց կը արուին ներդաշնակ զը-

րութեան: Սակայն և այնպէս, ոչ ոք, իւկօյէ զատ, երաժշտական եղաւ Ռասինի բարձրութեանը հաւասար:

Նուազակցութեան գաղափարը ծնունդ առած է արուեստին աւելի նրբանալովը, զգայարանաց աւելի սրուելովը, ամէն տեսակ բառերու, հասարակ կամ ժողովրդական, չրջաբերութեան մէջ մտնելովը, դիտողութեան և քննութեան ոգւոյն զարգանալովը, որոնք ազդեցին գաղղիներէն հնաւանդ քերականական կազմութեան, պարբերութեանց յօրինուածքին վրայ: Գերթողութեան մէջ, իւկօ—իրմէ առաջ Ռասին—հասցուց երաժշտական աղմուկը իր գագաթնակէտին: Իւկօ եղաւ ճարտար խաղացող մը բառերու հետ, բառերու ածպարար մը:

Նորագոյն արձակագիրները—բաց ի Ֆլօպէռէ—մտահոգութիւն չի ցցուին դասական ներդաշնակութեան և չէին կրնար անոր հետեւիլ, քանի որ իրենց Ֆլազի յօրինուածքն ու պարբերութեանց կերտուածքը զգալի փոփոխութիւններ մտցուցած էին նախորդներուն գրելու կերպին մէջ: Այս, սակայն, արգելք չեղաւ տը Կօնգուռներու, և ոչ իսկ Ջօլայի, որպէս զի ստեղծէին նոր տեսակ քաջաձայնութիւն մը որ, ըստ Պուալօյի օրինաց, խժաձայնութիւն պիտի անուանուէր: Ասոնք ալ գերազանցապէս խաղացին բառերու հետ, արտադրեցին ոչ միայն գոյն, հոտ, ճաշակ, ձև, հեռանկար, այլ աղմուկ մը, մրմունջ մը, երաժշտական նուազ մը և, դեռ աւելի, բառերու նուազակցութիւն մը: Տօտէ, աւելի չրջահայեաց և աւելի շնորհալի, տարբեր ճամբայ բռնեց և նուազ հեռացաւ դասական հեղինակաց մեղմ ներդաշնակութենէն:

Ամէն պարագայի մէջ, երբ խնդիրը կը կայանայ տը Կօնգուռներու կամ Ջօլայի յատուկ քաջաձայնութեան կամ նուազակցութեան վրայ, այլ ևս խօսքը չըլլար Պուալօյի: Բոլորովին անտեղի կ'ըլլայ Պուալօն յատակել՝ եթէ մարդ նպատակ չունի ֆրանսական գրականութեան պատմութիւնը գրելու:

Գալով Ալպալա անուն այդ հեղինակին, որուն մէկ դասագիրքէն վկայութիւն կը

բերուի, այդ վկայութիւնն իսկ գէշ ընտրուած է: Պէտք էր Ալպալայէ առաջ բերել, իբր վկայութիւն, ի՞նչ որ ան կը գրէ նորագոյն արձակին նկարագրին և բնոյթին վրայ, և լքանել, հոս, ի՞նչ որ արդէն ամէն մարդ գիտէ դասական ներդաշնակութեան մասին՝ որ սովորաբար աւանդուածն է ամէն վարժարաններուն մէջ, և որ միշտ պիտի աւանդուի: Արդէն, Ալպալա ցոյց կուտայ նաև թէ ո՞ր պարագաներու մէջ ներելի է շեղիլ դասական ներդաշնակութենէն:

Արդ, Ալպալա կը գրէ. «Մեր ժամանակի գրագիտաց մեծագոյն մասը կորուսած է դասական փառաւոր յորինուածքին ճաշակը, լաւ կերտուած պարբերութեանց ճարտար կարգաւորութիւնը: Միջանկեալներու ճշմարտապէս յոռի զեղծում մը մէջտեղ ելաւ: Մինչդեռ յանձնարարելի է խնամել Ֆռ.ազի մը ճարտարապետական յորինուածքը Ֆլուպէսի կերպովը. և այդ մասնաւոր խնամքը տանողներէն վերջինն է Ֆլուպէս»: — Արդ, ի՞նչ կերտուածք որ ունենայ պարբերութիւն մը, անոր համեմատ կը փոխուի cadence (դաշնաւորութիւն) և harmonie (ներդաշնակութիւնը): Այս օրուան կերտուածքը շատ կը զանազանի երկու հարիւր տարի առաջուան դասական կերպէն, և այս օրուան symphonien (նուագակցութիւն) երկու հարիւր տարի առաջ harmonie անուանուածէն տարբեր է:

Արդ, երբ ինձ կ'ըսեն թէ նենգութեամբ խեղաթիւրած եմ ուրիշի գրուածքը, ահա այդ ուրիշի գրուածքը, ինչպէս որ է, ինչպէս որ ես հաւատարմօրէն արտագրած էի նախապէս. — «Նկարչագէտ — գրագէտ եղբայրները կ'արուեստակերտէին իրենց ոճը ու զայն գոյներու ձգբրտանան պատկեր մը, զգայնութեանց խտացում մը ու ձայներու համերգութիւն մը (նոյնն է նուագակցութիւն) ընելու տանջող և դժուարահաճ փոյթն ունէին»: — Մինչև հոս, լա՛ւ: Բայց յաջորդ մասը, սխալ է. — «... բառերուն հնչունութեան և ներդաճակութեան ու խօսքին ոսկերչական ընդելուզման մտահոգութիւնը Ֆլուպէսէ աւելի հեռուն պանելով...»:

Արդ, քանի որ Պուալոյի վկայութեանը վրայ հիմնեցին իրենց դատը, այս կը նշանակէ թէ կը մտնեն Կօնգուռներուն նուագակցութիւնը՝ հին ներդաշնակութեան յղացման պէս: Լաւագոյն էր չհեռանալ Ալպալայէ, երբ մարդ այսքան քիչով դո՛ւ կ'ըլլայ: Միթէ նոյն Ալպալան չէ՞ որ կը գրէ, նոյն դասագրքին մէջ, քանի մը էջ անդին. — «Տը Կօնգուռները հին դասական ոճին ամէնէն յանդուգն յօդաբեկողներն (désarticulateurs) եղան»: Երբ հին ոճը կը յօդաբեկի, բնական հետեւանքով հին cadenceն ալ կ'այլալի, հին ներդաշնակութիւնն ալ կ'եղծանի:

Կօնգուռ և Ֆլուպէս չեն կրնար, հետեւաբար, բաղդատութեան մտնել գիտնականօրէն՝ որքան ատեն որ խնդիրն է ներդաշնակութիւնը: Այս՝ Ֆլուպէսի գլխաւոր յատկանիշն է: Կօնգուռներու գլխաւոր յատկանիշն ալ է՝ գծագրութիւն, պատկեր, նկարչութիւն: Առաջինը դասական շարադրութեան աչակերտ է, երկրորդը՝ եւ ոչ մէկ դպրոցի: Առաջնոյն մտահոգութիւնը, գլխաւոր մտահոգութիւնն է՝ ներդաշնակութիւնն է: Իսկ Կօնգուռներու համար նոյն բանը չի կրնար ըսուիլ. ո՛ւր մնաց պնդել թէ ասոնք «Ֆլուպէսէ աւելի հեռու (!) տարին ներդաճակութեան մտահոգութիւնը»: Այո՛, Ֆլուպէսէ աւելի հեռու տարին ուրիշ բան մը, այսինքն՝ բառերու հետ խաղալու, բառերու հնչունութեանն օգտուելու ճարտարութիւնը. բայց, դասական դաշնաւորութեան եւ ներդաշնակութեան մասին, շատ ասդին մնացին Ֆլուպէսէ: C'est clair et net comme clarinette:

Տը Կօնգուռներու ոճին առթիւ պնդել թէ «ներդաշնակ, հեշտ եւ հեղատա՛ է», գործել է մեծ anachronisme մը:

Այն վկայութիւնը զոր բերի ժիւլ Լըմէթոէ, ճիշտ էր, պատշաճ է եւ բնաւ չափազանցեալ չէր: Իրաւ, երբ Լըմէթո կըսէ թէ Կօնգուռները խնամք չեն տանիր քաջաճայնութեան, դաշնաւորութեան, յորինուածքի, իր աչքին առջեւ կը բերէ մանաւանդ Մանէք Սայրուօն եւ Մասաւ Ժեռվեգէ անուն

վէպերը: Այո՛, մանաւանդ ասոնք՝ որ ամէնէն աչքառուններն են իբր թերութիւն: Բայց ո՛ւրկէ խժածայնութեան օրինակ կը բերէ ժիւլ Լըմէթո՛ւ. Մանքէ՛ո՛ւ, Ժեռվեգէ՛ո՛ւ, այլ Քոլր Ֆիլօմէնէ՛՝ որ դասականին մօտ ողորկութեամբ մը գրուած է: Միթէ կը հետեւի՝ ասկէ որ Կօնգուռները բնաւ գրած չըլլան ներդաշնակօրէն: Ո՛չ բնականաբար: Այլ թէ իրենց արտադրած ներդաշնակութիւնը՝ իրենց ընդհանուր նկարագրին մասը չէ, պատահական է: Ժիւլ Լըմէթո՛ւ կը գրէ նաեւ. — Ֆիլօպէո՛ւ եւ Թէօֆիլ Կօթիէ կը գրեն ողորկութեամբ, երկուքն ալ կը յարգեն ինչ որ կ'անուանենք լեզուին ոգին, այսինքն, մէկ բառով, լեզուին սովորութիւնները: Երկուքն ալ, մին իր յամրագնաց եւ կարճ Ֆուադին մէջ, միւսն իր յորդառատ, անաշխատ եւ քիչ մը դանդաղ պարբերութեանը մէջ, յետն աստիճան մտահոգութիւն կը ցուցնեն ներդաշնակութեան: Կօնգուռներէ առաջ գտնուած բոլոր ոճի տէր գրողները կը զգուշանան բառերու կրկնութիւններէ, չարածայնութիւններէ, Ֆուադներու յօրինուածքի մէջ հաւասարակութեան եղծումներէ, եւ ստէպ ականջի համար կը գրեն: Կօնգուռները, գէթ իրենց նկարագրութեանց մէջ, կը գրեն միմիայն աչիք տեսութեան համար»:

Պէտք եղածը քաղեցինք ժիւլ Լըմէթո՛ւէ, չափաւոր, պարտ ու պատշաճ եւ ջանջալիւզ կերպով: Թողունք վայրկեան մը զայն եւ դիմենք մեր իսկ անձնական փորձառութեանն ու ծանօթութեանցը: Հետեւեալ օրինակները զոր կը հաւաքենք Ռքնե Մօքքուէնէ, դէմ են ներդաշնակութեան, արդիւնք չեն հեղինակաց անմտադրութեանը՝ այլ սովորութեանը, եւ չեն կրնար բաղդատութեան մօտել Ֆիլօպէո՛ւի կիրարկած դասական վայելուչ եւ ասխորժալուր ներդաշնակութեանը հետ: Պատահարին բերմամբը կը նտրեմ:

Էջ 297, տասը տողի մէջ վեց անգամ կը հանդպինք սա rose եւ rosier բառերուն: Կը յիշեցնեն, իրենց անդադար կրկնութեամբը, Զօլայի վարդենիներուն նկարագրութիւնները La Faute de l'Abbé Mouret վէպին մէջ:

Էջ 301, չորս տողի մէջ, իրարու խիստ մօտ դրացի չորս բառեր կը վերջանան entou, եւ են՝ changement, lentement, attouche-ment, commencement: Եւ ինչ դանդաղ ու երկայն բառեր: Միթէ այս է գրելու կերպն «հեշտ, հեղասահ ու ներդաշնակ»:

Էջ 306, իրարու յաջորդող երկու անկախ եւ կարճ Ֆուադներ աններդաշնակ աւարտներ (finale) ունին: Դասական մը պիտի խորշեր Կօնգուռներու այս ոչ-բացառիկ անմտադրութիւններէն: Près d'elle, il avait froid maintenant. C'était comme si la maladie lui volait tous les jours un peu du cœur de son enfant: Մաքրասէր դասականը պիտի գրած ըլլար, Près d'elle, maintenant, ... եւ ինչ: Միթէ նոյն համբաւաւոր Ալպալայի դասագրքին մէջ գրուած չէ՞ նաեւ թէ «Աւարտները խնամելով է որ կըստացուի երաժօտական կատարեալ ազդեցութիւնը»:

Էջ 325, երբ առարկայից գծագրութեանը վրայ կեդրոնացած է հեղինակներուն ուշադրութիւնը, այլ ևս անփոյթ են ասոնք ներդաշնակութեան, և իրարու ետեւ կը շարեն նմանաձայն վերջաւորութեամբ բառեր, dénoués, des blés, des bluets: Զխօսինք ականջ վիրաւորող միւս կոշտ բաղաձայններուն վրայ: Դարձեալ, այս է արդեօք, կը հարցնեմ, ինչ որ կ'անուանեն «ներդաշնակ, հեշտ և հեղասահ» Կօնգուռեան ոճ: Եւ մի՛ մոռնաք թէ այս անհոգութիւնը խիստ գեղեցիկ և սրտայոյզ նկարագրութեան մը առթիւ գործուած է, այսինքն՝ Ռքնէի սենեակին և ոգեւարի անկողնին տեսարանին առթիւ:

Ա՛լ վերջացնենք: Երկայն ու... անտանելի եղաւ գործը: Բայց որպէս զի գրածներս լաւ միտք պահուին, պիտի կրկնեմ թէ անհիմն է քովէ քով բերել Ֆիլօպէո՛ւ և Կօնգուռները՝ որոնք տարբեր կրթութեամբ առաջ եկած են: Ֆիլօպէո՛ւ դասականութեամբ սնած է, Հոմերոսի և Շաթօպոտիանի, Լա Պոիւլէոի և Մօնթէսքիէօյի սիրահարն ու զմայլողն եղած է: Հակառակը, Կօնգուռները նկարչութեան դռնէն է որ մտան գրականութեան մէջ և, ըստ վկայութեան Սէնդ

—Պէտլի,— «Կօնգուռները գրականութեան և գեղարուեստի մէջ մտան ԺԸ դարէն. այս դարն է որ եղաւ իրենց առաջին և միայնակ շնութեան օրինակը, և, այս դարուս ուսումնասիրութեանէն, անմիջապէս անցան օրուան բարձրութիւն և անձերուն ուսումնասիրութեանը»։ (Դեռահաս Միջակորեաբար, տե՛ս էջ 281)։

Յետոյ, (նոյն, էջ 289), Բօլ Պուռժէ գրեթէ նոյնը կը կրկնէ տարբեր եղանակով։ —«Կօնգուռներու արձակը հակապատկեր մըն է, անհաճոյ ըլլալու չափ նորատեսիլ, ամէն ընթերցողներու համար՝ որոնք վարժուած չեն մեր դասականներուն, որոնք մօտ դրացնութիւն ունեցած են Սալստոսի և առնական Տիդէ—Լիվի տոկուն էջերուն հետ»։ —Արդ, ինչ զիտէին Սալստոս և Տիդէ—Լիվ այն ցուա գակցութեանց՝ զոր կիրարկեցին Կօնգուռներ, Զօլա և, ոտանաւորի մէջ, Իւկօ։ Անոնք, սակայն, մտահոգութեամբ կը խնամէին ներդաշնակութիւնը։

Գալով այդ «փոքրիկ դադարներուն» (pause) որոնք ինձ կը հառուցուն փոխարէն այն cadenceին՝ զոր ես տեսնել փափաքեցայ, պիտի խնդրեմ որ ինձ ցոյց տրուին այն հեղինակաւոր քննադատներու անունները՝ որոնք այդպէս «հորիզոնական դիմերով» երաժշտական թուականութիւն մը նշմարած են Charles Demailly անուն վէպին էջերէն մէկուն մէջ։ Ուրախ պիտի ըլլայի կարդալով բուն այդ քննադատներուն կարծիքը, կարենալ կատարեալ համոզում գոյացնելու համար։ Պէտք չէ որ փաստերու պակասութեան պատճառով, քննադատութիւն մը... անտանելի ըլլայ։

Իսկ թէ Կօնգուռները ի՞նչպիսի ներդաշնակութիւն ունին՝ զոր մենք մինչև հիմայ չենք գիտցած, այս բանը պարտ էր լուսաբանուել անոնց գաղղիներէն բնագրին ցուցմամբը, ո՛չ թէ հայերէնի թարգմանուած աններդաշնակ նմոյշով մը։ Ի՞նչպէս կուզէք որ բժիշկ մը իր բազկերակին բարախումը միայն համբելով, գուշակէր հիւանդին բարախմանց թիւը։ Բոլորովին նորօրինակ դրութեամբ մը կը վարուին ինձ նկատմամբ, կարծելով թէ դիւրին է ամէն սխալ խօսք քելել։

Աւելի լուրջ ըլլանք, կադալէմ, և դգուռնանք մի միայն հանդիսատեսները ապշեցնելու նպատակով գրելէ և դատելէ (pour épater la galerie)։ Մէկ անգամ ընդ միշտ որոշենք թէ ո՛վ աններդաշնակ գրողի յիշատակ պիտի թողու հայ մատենագրութեան մէջ։

Ներդաշնակութիւն ըսուածը կերակուրի համեմանքին չի նմանիր որ վերջէն վրան անցուի։ Ան, սերտ աղերս ունի բառերու կեանքին, կարգաւորութեանը և Ֆուպի շարադասութեանը հետ և ասոնց ամենուն հետ կը ծնի միանգամայն։ Թէ ի՞նչպէս թէն կը յաջողի յարաբերաբար ներդաշնակ մնալ իր չեղձակութեան (accumulatif) կերտւածքովը. այդ իր յօրինուածքին կերպէն է։ Իսկ դասականներուն յօրինուածքին կերպէն է որ բացարձակօրէն և միօրինակօրէն ներդաշնակ կը մնան։ Եթէ Կօնգուռները չունին այդ ներդաշնակութիւնը, ի՞նչ ընենք ասոր համար։ Ծո՛վը նետուինք։

Դարձեալ, Ռեմէ Մօբսէն չորս հարիւրի մօտ էջերէ բազկացեալ սիրուն և սրտայոյզ վէպ մըն է։ Այդ պատկառելի հատորին մէջ հազիւ պիտի գտնէինք երկու կամ երեք ամբողջ էջեր՝ ուր հեղինակները երաժշտական շարադրութիւն մը գրել ուզած ըլլան՝ նուազակցութիւն յօրինելու դիտաւորութեամբ։ Անոնք ալ են, գլխաւորաբար, Ռենէի մանկութեան և հիւանդութեան օրերուն յիշատակները, Մօբսէի անտառներուն մէջ չորաջագրութեանց միջոցին, (տես թարգմանութիւնս, էջ 20 և 243)։ Մնացած գրեթէ բոլոր էջերուն նիւթերն են ընտանեկան խօսակցութիւններ և քանի մը կտրեւոր նկարագրութիւններ, բոլորովին նկարչական։ Գրքին վերջին մասերն ալ միսթիքական ու հոգեբանական են։

Գրքին սկիզբի երկայն նկարագրութիւնը կատարեալպէս նկարչական է. Սէն գետին եզերքը կը պատկերացնէ և, իր տեսակին մէջ, բոլորովին նորութիւն է. որովհետև Կօնգուռները առաջին անգամ մտցուցին այդ նկարագրութեան կերպը՝ որոնց օրինակէն հատ մը ունին Ժեռ. Լիֆի մէջ (l'entrée des

champs) և հատ մըն ալ Քօյր Ֆիլօմէի մէջ (Հիւանդանոցի սրահը) :

Սէն գետին նկարագրութիւնը, յայտնի է,— և ես այդպէս կը հաւատամ— թէ առնուած է պատկերհանի մը նկարէն : Կարդացէ՛ք էջ 17 : Ռընէ, ցոյց տալէ վերջ այդ տեսարանը, կ'աւելցնէ. — «Երկու տարի առաջ այս աղ-դեցութիւնն արտադրող նկար մը կար ցուցահանդէսին մէջ : Ա՛ս էր... բաներ կայ զոր կըզգամ, ես» : Հաւանաբար, այս «ես»ը, հեղինակներուն կ'երթայ. անոնք տեսած են Սէնը — նախ պատկերի մէջ, և յետոյ, բնութեան վրայ ամբողջացուցած են իրենց քննութիւնը : Ռընէի խօսքը կը մատնէ իրենց սովորութիւնը :

Իւրաքանչիւր հեղինակ ունի իր յատկա-նշական ձիրքը : Զայներու երաժշտութեան մասին, թերևս ոչ ոք հաւասարէր Ռասինի, Լամառթինի և Իւկօյի : Մանրակրկիտ խուզար-

կութեանց մասին, ոչ ոք հասնէր Կօնգուռ-ներու : Թէօֆիլ Կօթիէ ձեւեց իր արուեստը ոսկերչութեան և քանդակչութեան վրայ և, իբր արդիւնք իր այս տաղանդին, հաւաքեց իր քերթուածները Emaux et Camées (Կիտուածանկարներ և Խեցաքարեր) վեր-նագրին տակ : Իսկ գալով Կօնգուռներու, ասոնց մտահոգութիւնն ալ էր գրչով պատ-կերացնել Միւսէօններու մէջ ի տես դրուած նկարները : Իրենց տունը, սենեակները լե-ցուն էին գեղարուեստի առարկաներով, փորագրութիւն, կիտուածք, գեղօրներ, արձաններ : Անոնք վարժութիւն ըրած էին, կարծես, բնութիւնը դիտել նկարներու մէջէն : Կը կարծեմ թէ կը բաւէ : Զեզի թիւ մարդը, դուք ցոյց տրուածներուն նայեցէ՛ք, ու զանոնք հերքեցէ՛ք. ու ամէն խնդիր կը լուծուի :

Գ. Բ. ՄԱՆԼԵՍ

L E T S

«Մեկնէ՛ եւ գընա՛, ըսի հաւփալին,
«Յարդի, վարսակի դաշտերէն հեռու,
«Գլտնելու համար ծաղիկն այն հեշտին,
«Որ լարմար ըլլայ զիս սիրցընելու» :

Սակայն հաւփալը ինձ ըսաւ հանդարտ
«Այդ ծաղիկն ինձմէ չա՛տ հեռու է, չա՛տ» :

Անկէ վըհատած՝ եկայ ես կըրկին,
Ըսի արծիւին. «Կը վստահիմ քեզ,
«Երբոր պէտք է ինձ հուրքը երկինքին,
«Բարձրացի՛ր արագ որ զայն կախարդես» :

Ինձ պատասխանեց արծիւը սա՛յն,
«Այդ երկինքն ինձմէ բարձր է այնքան» :

Ու ըսի անգղին. «Պատռէ՛ ուժգնօրէն,
«Այս սիրտըս զոր այն հուրին կը զեղու,
«Քու բաժինըդ ա՛ռ, բայց ձգէ նորէն,
«Ինչ որ դեռ կըրնայ մընալ ջինջ, աղու» :

Սակայն անգղը ինձ ըսաւ մեղմագին.
«Ատենը ուշ է քու այդ բաղձանքին» :

Վ. ԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ (*)

Շատ քիչ անգամ պատահած է որ հասարակութիւնը զբաղի գրչի մարդոց բուն կեանքովը։ Ամէնէն քաղաքակրթուած երկիրներուն մէջ իսկ, գրագէտներու իրական կեանքը բնաւ չէ զբաղեցուցած հանրութիւնը որ միայն առօրեայ հրատարակութիւններուն, օրուան գրական, ընկերական, կրօնային գրուածքներուն մէջը կ'ամփոփուի պահ մը և անկէջ վերջը իր կարծիքը կը յայտնէ։

— Այս յօդուածը չա'տ աղէկ գրուած է. մարդը տաղանդ ունի, հիանալի կը գրէ ան արդէն։

Եւ կամ.

— Ինչ սիրուն ոտանաւոր է ասիկա. իրաւ որ մինչև հիմա դեռ ասանկ գեղեցիկ քերթուած չէի կարդացած։

Գնահատումը այսպէս կը հիւսուի, և կամ եթէ չեն հաւնած իրենց կարդացածին, ճիշդ, մեկնոյն եղանակով կը պարսաւեն գրողը, կէզ գրողը։

Ու ա'յսչափ։ Անկից անդին ոչի'նչ զիրենք կը հետաքրքրէ. ինչպէ՞ս կ'ապրի, ո՞վ է, ո՞ր ծնած է, ո՞ր առած է իր ուսումը, ընտանիք ունի՞. ասոնք այն տեսակ հարցումներ են, որոնց պատասխանը փնտռել երբեք չպիտի ուզէր հասարակութիւն կոչուած անըմբռնելի զանգուածը։ Եւ օր մըն ալ կը պատահի որ գրագէտը աշխատութենէ դադրի, մեկնոյն անտարբերութիւնով խուժանը կը լքէ զայն իր մոռացումի անկումին մէջ և չփնտռելու երբեք անոր մեկուսացումին, անոր գրելէ քաշուելուն պատճառը։

Եւ կրնաք վստահ ըլլալ որ մեծ մասը ժողովուրդին, եսասիրութեան, ինքնապաշտութեան զգացումէն տարուած՝ կը մխրճուի ընթերցանութեան մէջ, և զայն աղուոր կը գտնէ այն պարագային, երբոր իր հակումներուն, իր գաղափարներուն, իր նախընտրութիւններուն գերազանցօրէն պատշաճի։ Ասիկա արհամարելի չպիտի ըլլար, եթէ չա-

տերու այդ ըմբռնումը. զօրացած ըլլար՝ գրագէտը իր ամբողջութեան, իր իսկութեանը մէջ ճանչնալու հետաքրքրութեանը հետ։

Չեմ կրնար հետեցնել թէ յանցանքը որո՞նքն է. եթէ ձեր մարմինին մէկ մասին վրայ վէրք մը բացուի, կարծեմ առաջին առիթով զանիկա բուժելուն վրայ կը խորհիք քան անոր ուրկէ՞ առաջ դալուն և ի՞նչ բանէ ծագում առած ըլլալուն վրայ։

* *

«Վ.» այնքան սիրուն ոտանաւորներ արտադրելէ վերջը մեկուսացաւ մէկէն ի մէկ։ Ո՛չ որ հարցուց թէ ինչո՞ւ չգրեր ա՛լ։

Պատճառ մը չունի... գրելու, անո՛ր համար թերեւ, կը խորհին շատեր մեր գրողներէն։ Բայց ատիկա չէ՝ փնտռուածը. պէ՛տք էր որ հետաքրքրութիւնը մինչև կեանքին վերջը տեւէր, պէտք էր որ հանրութեան մտահոգութիւն պատճառէր այդ պարագան։ Խնդիրը պէտք է գիտնալ որ միայն «Վ.»ին վրայ չէ՝ Լնդհանուրին համար է խօսքս։ Մասեօի ընթերցողներէն ո՞վ միտքէն անցուց բոլոր այս պարագաները, անոնք որ այնքան հետաքրքրութեամբ կը կարդային գրական ո՛ւ և է հրատարակութիւն։

Մ'հ, չէ՛, միտքս «Դիւցազներգութիւն» մը հիւսել չէ «Վ.»ին շուրջը, որ թերեւս աւելի չա'տ անտարբեր է քան զինքը կարդացողները և որ կը գրէր մի՛ միայն իր անձնական ճաշակներուն, բաղձանքներուն գոհացում մը տալու համար։ Կ'արժէր որ անգամ մը անոր վրայ խօսուէր, գէթ անգամ մը, քանի որ առիթը... չիներկայանար միշտ, իբր թէ ես անոր սպասած ըլլայի...։

«Վ.»ին քերթուածները ուսումնասիրել փորձած ատենս, — բանաստեղծութիւն մը որ գրեթէ երեսուն հատուածներէ կը բաղկանայ (արձակ թէ ոտանաւոր), — և որ սակայն ամբողջ կեանք մըն է, միտքս կ'իյնայ Պոստըլէրէն կտոր մը զոր «Չարին ծաղիկները»ին հեղինակը իր անձին համար գրած է։

«Հոգին հարցապնդել, յափշտակութեան վարկեանները յիշել, վերջապէս անձին խորը իջնել, ահա՛ ճշմարիտ բանաստեղծութիւնը»։

Փայլակ, այսինքն Ժաք Սայապալեան,

(*) Մապիս 1902—1903—1904։

տարբեր ուղղութեան մը չհետեւեցաւ «Վ.» ստորագրած իր ոտանաւորներուն մէջ, Հարկ չկայ արդէն խորհրդածելու, զինքը կարդացած ատեննիդ աւազանի մը վճիտ ջուրին պէս վրայէն կը նայիք ու կը տեսնէք ամբողջ յստակութիւնը խորութեան:

Իր բանաստեղծութիւնը կնճիռ չունի երբեք. ցաւին պրկումները, սպասումին տենդը, սրտի վիշտերը զինքը կը խոշտանգեն, կը գալարեն և այդ ազդեցութեան տակ կը հիւսէ ան սիրոյ երգ մը, որ ցաւագին է, թէ և պզտիկ թերութիւններ ունենայ արուեստի տեսակէտով:

Արուեստ չեմ փնտռեր արդէն իր բանաստեղծութիւններուն մէջ, ցաւը ա՛յնքան թեւատարած կ'իջիւէ այդ կեանքին վրայ որ բանաստեղծը ուրիշ բան չկրնար ընել, եթէ ոչ միայն և բացարձակապէս ինքզինքը նկարագրել. իր մտածումը արտացոլացնող դարձումը ներքէն յաճախ կրկնուած են, անոնց իմաստը տափակցընելու աստիճան, ու յետոյ Լուսնակիմ, Գաբուր, Հանգաւակ, Տուայտմբ, Վերջուումը վերնագիրները կրող ոտանաւորները այնքան banal են, որքան միամիտ: Ատիկա մեծ թերութիւն մը պիտի սեպուէր, եթէ «Վ.» ինքզինքը ներկայացնէր իբրեւ մէկը որ «արուեստը արուեստին համար» կը գրէ: Բայց անանկ չէ:

Ո՛չ ան և ո՛չ ալ մենք կրնանք այդ բացատրութիւնը իրեն յարմարցընել: Անիկա կըզգայ, անիկա կը տառապի, և մանաւանդ մեկ հոգի կը սիրէ. դարձեալ Պօտըլէլը մէջ բերելով, ան Երբ միայն կ'երգէր, մինչդեռ «Վ.» սէր մը. ֆրանսացի բանաստեղծը անհատական կիրք չէր ընդուներ, խի՛ստ տափակ կը գտնէր զայն: Մինչդեռ «Վ.» տարբեր տեսակէտներով կը ներկայանայ մեզի, բոլորովին տարբեր մենէ շատերէն:

Կը զարմանամ թէ ինչպէ՛ս շատեր չեն կրնար ըմբռնել թէ գրող մը կրնայ առանց ապրած ըլլալու, առանց զգացած ըլլալու գրել: Ես անձնական փորձառութեամբս գիտեմ որ չա՛տ աւելի դիւրին է երեւակայելով գրելը քան զգալով: Ճշգրտանման ընել կարենալուն մէջ է միայն արուեստը.

եթէ իմ ոտանաւորներս ամէնքն ալ ապրած ըլլայի, մինչև հիմա տասն անգամ մեռած լինցած էի: Դադափար մը միտքս կիյնայ յանկարծ, կ'ընդլայնեմ զայն, առանց խորհելու թէ այդ գրածս նախորդները կը հերքէ, ասոր համար է որ իմ քննադատներէս շատեր Անգլանգին առիթով գրեցին թէ «քերթուած» ներս աղէկ չեն դասակարգուած»:

Եթէ այս համոզումս մէջ բերի, պարզապէս սա ըսելու համար էր թէ գրողներ կան որ ապրելով՝ և գրողներ ալ որ երեւակայելով կ'արտադրեն:

Այդ երկուքին բաղդատութիւնը մէկդի ընելով, փութամ ըսելու որ «Վ.» միակն է մեր նորերուն մէջ որ սէր մը հետապնդած է, լոկ աճո՛ւ համար գրած, աճո՛ւ համար տառապած է: Նիւթապաշտութեան այս գոնհիկ դարուն մէջ, ուր մարդկութիւնը կարծես աւելի՛ ահռելիօրէն տգեղցեր է, ուր սիրոյ հաւատարմական զգացումին նշոյլը չիկայ և ուր ամէն մէկ քայլերնուղ յուսախաբութեան ու մոլորանքի կը հանդիպիք, չա՛տ դժուար պիտի ըլլար ասանկ պաշտում մը, ասանկ երկրպագութիւն մը երեւակայելը:

Սա մեր չուրջի մարդիկը բիրտ, անըզգայ, Լայն միջոց մը բերին դրին մէջտեղնիս, Եւ կարօտ մը սրտակեղծք ու հսկայ Հիմա սաստիկ պրկումներով կ'այրէ գիս:

Ասկէց կըսկսի պատմութիւնը. իր ոտանաւորները իրարու ետեւ կարդացած ատեննիդ լէպի մը տպաւորութիւնը պիտի կրէք: Անոնք իրարմէ անջատուած են կարծես հովի ըմբոստ հոսանքի մը բաղխումով: Միջոց թէ և գոյութիւն ունի միշտ, բայց բանաստեղծը քիչ մը կը մխիթարուի անոր «սիրատում» երէն.

Եւ նամակըդ, ինծի համար հոգեթով,
Աղօթագիրք մըն է զոր միշտ եռանդով
Պիտի լափեմ, պիտի կարդամ ամէն օր:

Ու յետոյ երազներ կ'ունենայ. տեսէ՛ք ի՞նչ կ'երեւակայէ ա՛յն քերթուածին մէջ որ ձեւմակեցր վերնագիրը կը կրէ և զոր չեմ

վարանիր ամբողջապէս ձեր առջև անգամ մը կարդալէ .

Լոկ ձեփ ճերմակ փրփուրներու ծածանոտ Ովկեանի մ'անեզրութեան մէջ անհետ, Սիրուն ճերմակ կղզի մ'ըլլար անծանօթ Ու միս մինակ հոն ապրէինք քեզի հետ :

Հոն ամէն բան ճերմակ ըլլար, ամէն բան, Հորիզոնէն մինչև դաշտը ամայի ճերմակը լոկ տիրապետէր անխափան .

Միւս գոյներուն գոյութիւնն ալ մոռնալի :

Ճերմակ՝ երկինք, լուսին, արեւ ու ծաղիկ, Ու ամէն տեղն ալ մեր պզտիկ վիլլային : Ճերմակ ամպերն ալ կուտակուած խաղաղիկ, Գլխուդ վրայ ամպհովանի ըլլային :

Բաց ի գորչէն նուրբ մազերուդ վէտվէտուն Ու կապոյտէն աչքերուդ ջինջ ու բեկբեկ, Ճերմակը լոկ տիրէր անծայր ու անհուն, Եւ անկէ զատ գոյն մը չըլլար հոն երբե՛ք :

Ու հալէին սրտիս բիծերը ամէն Այդ ձեփ ճերմակ մթնոլորտին մէջ անբիծ, Մէ, քու չքնաղ էութեանդ պաշտումէն Ուրիշ ոչ մէկ երազ յուզէր այլևս զիս :

Պարուրէինք զիրար, հո՛գիս, անսահման Ու հոգեթով սիրոյ մը մէջ ձեփ ճերմակ, Եւ երկնից մէջ հալող ամպի մը նման Հատնէինք հոն ձիւն յուզումներով համակ :

Զգլխիչ չէ՛ք գտներ զգացումի այս ամբողջութիւնը, փափաքներու այս ձիւնասպիտակ ճերմակութիւնը : «Ամենէն մեծ երջանիկը պիտի ըլլայ դարդէս մը, մանաւանդ բանաստեղծ մը, եթէ իր ճաշակին անծանօթ զգայութիւն մը հագցնէ, կը գրէ Թէոֆիլ Կոթիէ» : — Վերջին աստիճան յաջողած է «Վ.» այս կտորին մէջ, թէ՛ արուեստի և թէ՛ զգացումի տեսակէտներով հաւասարապէս : Կողբէի պահանջած այդ անծանօթ զգայութիւնը կ'ապրի հոտ :

Ուրիշ ոտանաւորի մը մէջ իր բարեկամին կտակ մը կ'ընէ, այսինքն իր սիրտը՝ «զոր կարօտները կրծած են և որ վաղն իսկ կըր-

նայ ցամքիլ ծարաւ, անսուաղ, ու յանձնուիլ գերեզմանի ցուրտ ծոցին», կ'ուզէ ամէնէն ծածկել .

Այն ատեն թո՛ղ օտարները չկարդան Սրտի կեանքիս բեկորները անկենդան . Ժողվէ զանոնք, չինէ սև փունջ մը ատով .

Այն հրեշտակը (իր բառով) որուն ոտքերուն տակ պիտի տարուի սփռել այդ սև փունջը, այդ հրեշտակը՝ հակառակ թեւեր չունենալուն՝ օր մը կրնար թռչիլ, գալու համար իր քովը, երազուած կեանքին հեշտառատ երջանկութիւնը ծծելու կարօտով : Եւ արդէն, սիրող—բանաստեղծը այդ վարկեանը փութացնելու ճիգին մէջ կ'ուզէ կոտորել, փշրել ժամացոյցը .

Երջանկութեան վարկեաններնիս չգողնայ, Թո՛ղ կանգ առնէ մինչև որ քովդ ըլլամ ես :

Սիրելու այս թափը, վայելքի այս փութկոտ անհամբերութիւնը մարդկային է բոլորովին : Իր անձը բզբտել, չարչարել կուտայ մարդուս, արտակարգ մեղամաղձութեան մը բովանդակ սարսուռներով :

Կապոյտներ և էօվփայս վերնագիրներով երկու արձակ բանաստեղծութիւնները կատարելապէս կը ներկայացնեն խնկարկուած աստուածուհիին ամբողջ էութիւնը, իր նայուածքի երանգով ու նոյն իսկ անունով ալ... :

Մեր մէջ, դա՛րձեալ կ'ուզեմ շեշտել, ո՛չ ոք կրցաւ այսպէս կի՛ն մը տարփողել, զանիկա սիրելով, զանիկա միա՛յն երազելով .

Սակայն մարմինս այրող տենդը ոչինչ է Այն բոցին քով որ հոգիս Կը մրըրկէ, կը լափիլդէ, կը ջնջէ, Ի՛նչ կարօտովդ, հոգի՛ս . . .

Սովորական դարձած բացատրութիւն մըն է ասիկա զոր ո՛վ գիտէ ի՛նչ տագնապալից զգայալուզութեամբ մը թուղթին յանձնած է ձերմակները ստորագրող համակրելի բանաստեղծը :

Այսօրուան մեր գրականութեան մէջ ես

րեւցող սիրային ոտանաւորներէն շատեր կըր-
նան իրարու հետ մըցիլ, տխմար գիւտերու,
տափակ հեծեծանքներու, անխորհուրդ ու
անիմաստ հատումներու տեսակէտով: Ո՛չ
արուեստ կայ իրենց գրածին մէջ և ո՛չ ալ
ճշմարիտ ներշնչում. աշխարհաբար մը կը
գրեն որ ասկէց դար մը առաջուան աշխար-
հաբարը կը յիշեցնէ. արդէն շատ քիչեր կան
հիմակ մեր հրապարակին վրայ իրաւցընէ բա-
նաստեղծութեան յարմարութիւն ունեցող:
Ես չեմ ըսեր որ երկինքէն կ'իջնեն այդ
մարդիկը, օ՛հ, չէ՛. աշխատելով, ճգնելով,
միշտ ուսումնասիրելով մարդ կրնայ օրին
մէկը գոող ըլլալ:

«Վ.»ին սիրոյ կեանքը արատներ չկրեր:
Անիկա մաքուր է ձիւնին պէս ու յստակ՝
պորփրերին նման: Արուեստին հոգը եթէ
քիչ մը աւելի զօրաւոր ըլլար «Վ.»ին մէջ,
ու եթէ քիչ մը աւելի՝ խորշը կրկնութիւն-
ներ ընելէ, այն ատեն զինքը մեր արդի
երիտասարդ բանաստեղծներուն ամէնէն
նախընտրելին պիտի նկատէի:

Իր մէջ ինչ որ ամէնէն շատ կը գնահատ-
ուի, սիրոյ ըմբռնումն է, որ հաւատքի կը
նմանի կարծես: Բարձր է ան և բոլորովին
վեր՝ ռամիկին սովորականութենէն: Ամէն
մարդ չկրնար այդպէս խորհիլ, չկրնար
կեանքի այդ ալիքներուն յանձնել ինքզինքը:

«Վ.»ի բանաստեղծական կեանքը ուսում-
նասիրեցի միայն, ինչ որ փափաքս էր երկար
ատենէ ի վեր: Կը հիանամ ասանկ նկարա-
գիրներուն վրայ, վասնզի չեմ կրնար հիմակ
ինքզինքիս խօսք հասկցնել որ հաւատայ
ամէն բանի, որ քիչ մը նուազ կասկածոտ,
նուա՛զ դժուարահաւան ըլլայ: «Վ.»ին ի-
տէալի մը այս սեւեռումը, աչքերու դժուար
բան մը կ'երեւայ: Եւ զարմանքս չափ չու-
նենար, երբ կը կարդամ հետեւեալ ոտանա-
ւորը որ բոլորովին անտիպ է և զոր կը յու-
սամ թէ հաճոյքով պիտի կարդաք.

ՀԱՒԱՏՔՍ

Մանկութեանս հաւատքները բոլոր կոյս
Սառոյցի պէս մէկիկ մէկիկ հալեցան,
Գորովանքի առարկաներն ալ հոգւոյս
Տարտղնեցան, անկապակից, ցիրուցան:

Հաւատեսի համոզումներս բովանդակ
Իրականին կոչտ հըպումով ջլատող,
Փշրուեցան նիւթին ճնշող բեռան տակ,
Եւ զիս ըրին հիմա աշխարհը ատող:

Ո՛չ ցնդումը հին յոյսերուս սընամէջ,
Սակա՛յն, ո՛չ ալ խոր պօգանքը այս կեանքին
Կրնան դատարկ մը բանալ հոս, սրտիս մէջ,
Բանի որ հոն կը մնայ միշտ անբասիր
Հաւատքը քու սիրոյդ անքիծ ու անգին,
Եւ Աստուծոյն՝ որ բարի է,— դո՛ւն ըսիր:

* *

Անգամ մը որ մարդ ա՛լ երջանիկ կըզգա
Ինքզինքը, արդեօք ի՞նչ տպաւորութիւն կը
կրէ իր դժբաղդութեան, տուայտանքի, կա-
րօտի օրերուն պատմութիւնը թղթատելով:
Հիմակ արդեօք ի՞նչ կը մտածեն այս ասօր
տխուր քերթուածներուն վրայ, արտադրողը
և միւսը, հուրին, որ զանոնք կարդաց: Օտ-
ւատանջ օրերու այդ վերջիւումը արդեօք
ի՞նչ տպաւորութիւն կ'ընէ այդ երկու էակ-
ներուն վրայ, որոնք հիմակ երջանիկներուն
երջանիկն են, ինչպէս վստահ եմ:

Ամէն պարագայի մէջ, հրճուանքով չէ՛
որ պիտի կարդան զանոնք, և իրենց ամէնէն
բուռն ու խանդոտ վերացումի պահերուն
մէջ իսկ չեմ կարծեր որ դառնութեան, անց-
եալ կեանքի մը սիրային տառապանքին տե-
ղատութեան կոհակը չալելով՝ հոգիին:

Տխուր կեանքերին գիտենք, մեր ար-
դար իրաւունքը չէ՛ ուրեմն որպէս զի հե-
ռուէն իրենց երջանկութեան երգերը պա-
հանջենք հիմակ, երգեր որոնց երաժշտակա-
նութիւնը թերեւս ընդարմացնէ մենէ շա-
տերուն ստոյիկ ու արհամարհանքով բթա-
ցած էութիւնները: Հիմակ որ ա՛լ պատճա-
մը չունին ինքզինքնին դժբաղդ համարելու
պէտք չէ՞ որ երջանկութեան վրայ ալ մեզի
գաղափար մը տան, ինչպէս տուաւ «Վ.»
սիրոյ բանաստեղծականութեան, հաւատքի
պակուցումին ու կարօտի ցաւատանջ ինքնա-
լըկումին վրայ՝ յուղումնալից քերթուած-
ներով:

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՖՐԱՆՍԱՅԵՆ ԴԵՊԻ ՊՐԱԶԻԼԻԱ

(ՏՈՒՔՔ. ԼԷՈՒՐՈՒ ԳՈՒՐԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

Բայց այդ իրիկունը, մեր ճամբորդը խոսակցելու տրամադրութիւն չունէր։ Սա ալ կայ որ տաքը սաստիկ էր։ Փոթորկալից երկնքի մը ծանրութեան տակ պիտի խղճուէինք կարծես . օդը ծանրաբեռնուած էր ելքնորականութեամբ, ծովը կը բարձրանար փոքրիկ խիտ ալիքներով որոնք Քարաբիցան կ'օրօրէին անկանոն կերպով։ Ամէնուս վրայ մտահոգութիւն մը կար։

Ընթրիքէն ետք, պառնունհին որ ջղագրգիւ վիճակ մը ունէր, հանդարտեցուցիչ դեղ մը խնդրեց ինձմէ։ Ես ինքն անգամ խցիկիս մէջ չէի կրնար մնալ։ Կէս գիշերէն մէկ ժամ առաջ, կամրջակին վրայ ելայ ուր բաւական ատեն մնացի, սպասելով թեթեւ հովի մը որ չէր գար, աւա՛ղ։

Եաջորդ օրուան առաւօտուն, Բէրնամպուքէն չորս մղոն հեռաւորութեամբ անցանք։ Արշալոյսին, պառնոնը ու նաւապետը երկար տեսակցութիւն մը ունեցած էին որոշելու համար թէ կանգ պիտի առնէին այդ ցամաքին առջև որ հիւրընկալ երկրի մը համբաւը չունի։ Պ. տը Կռավալ կը պնդէր թէ Բէրնամպուքը դեղին տենդի մնայուն կեդրոն մըն է և իր բաղդէն՝ բոլորովին ալ անիրաւ չէր։ Այդ վատառողջ երկրին չմօտենալու համար անոր ցոյց տուած յամառութեանը առջև, նաւապետը տեղի տուաւ և հաւանեցաւ բաց ծովի վրայ նաւարկել դէպի Մասէյօ։ Բայց ճակատագրային բան մը կար որ, պառնոնը պիտի ընդդիմանար՝ ցամաք ելլելու որ և է առաջարկութեան։ Երբ Մասէյօի մօտեցանք, դարձեալ դիտել տուաւ նաւապետին, թէ այդ կողմերը մաքուր չէին և թէ փափագ չունէր տխմարօրէն հիւընդնալու։ Նաւապետը անոր այս քմաւահայտքին ալ համակերպելու բարեմտութիւնն ունեցաւ, թէ և կ'աճապարէր որ և է ցամաք հասնի՝ հեռագրով հաղորդակցելու համար զբօսանաւուն տիրոջ, Պ. Նիքօլսընի հետ, ի Բօրթամուդ։ Ուստի գիշերը Մասէյօի առջև անցուցինք, առանց նաւակ մը ճամբ

բայ հանելու դէպի եզերք ոչ ալ այցելութիւն մը ընդունելու։

Իր այս կրկնակ յաջողութիւններուն բերմամբ Պ. տը Կռավալ ախարհի է՛ն հաճոյակատար մարդը դարձաւ։ Ալ ո՛չ դէմքը մըռայած էր և ո՛չ ալ երկարատե մեկուսացումներ կուեննար իր խցիկին մէջ։

—Վայրկեաններ կան ուր մարդ հաճոյք կը զգայ կեանքէն, ըսաւ ինձ։

—Սա ալ ճիշդ է որ, պատասխանեցի, այսօրուան օդը և երէկուան օդը բաղդատութիւն չեն վերցնէր։ Երէկ փոթորիկ կըսպառնար ու այսօր հանդարտ է ծովը։

—Եւ ուրախութեան պիտի նուիրենք ինքզինքնիս։

Թեթեւ քայլերով դնաց հրահանգ տալ, որպէսզի շոգեմալին մարդիկը զբօսալից ժամի անցունեն։ Շամբանեա մատուակեցին և պառնունհին կամրջակին վրայ երեւցաւ, բաց-գոյն արդուզարդով մը որ երջանակութեան նշանակ էր։ Նաւազները իրենք ալ թօթափելով իրենց լրջութիւնը, սկսան զուարթ երգեր երգել։

Պարերը յաջորդեցին երգերուն զորս կ'օգտորէին շամբանեայի բաժակները։

Լուսինը կը շողար երկնից վերև, ատեն ատեն սքողուելով ամպի ծուէններու տակ։ Այդ վայրկեաններուն է որ նոր հրաւիրեալներ կուգային մասնակցելու պարերուն ու մեր ցայգահանդէսին վրայ կ'աւելցնէին զբօսանքի նոր տարր մը, ըսել կուգեմ ոստոստող ձուկերը։ Այս տարօրինակ կենդանիները դուրս կը ցատկէին ծովէն, կը դառնային ալիքներուն վերև և գլխիվայր կ'իյնային կամրջակին վրայ, առնուազն չորս մէթր բարձրութեամբ վտանգալից ոստիւնէ մը վերջ։ Մեր նաւազները առատօրէն որսացին անոնցմէ։ Իրենց եռանդը կ'արծարծուէր՝ ազնուական ամուլին հաճելի դառնալու եռանդէն։ Դիտէին որ պառնոնը միշտ առատօրէն կը վարձատրէր և անոր հաճելի ըլլալու համար սիրով յանձն կ'առնէին յոգնիլ։

Այս սիրուն ցայգահանդէսը նպաստելու էր միտքերը գոտարթացնելու . բայց հակառակը պատահեցաւ : Թէպէտ պառօնը քանիցս բաժակաճառեր առաջարկեց նաւապետին կենաց, բայց այս վերջինը չհրաժարեցաւ ընաւ իր պաղարիւն ընթացքէն, և յաջորդ առաւօտուն, արչալոյսին, նորէն վէճ կը ծագէր իր և իր քմահաճ ուղեւորին միջեւ :

Երբ Պ. տը կռավալ իմացաւ թէ դէպի Պահիա կը նաւարկէինք, իրեն համար այլևս ընական դարձող հրամայական չեղտով ըսաւ նաւապետին թէ իր նպատակը այսքան շուտ Պահիա երթալ չէր եւ թէ կուղէր առիթէն օգտուիլ՝ Քամամիւլ այցելելու համար, որուն վրայ հետաքրքրաշարժ բաներ իմացած էր : Ի դուր պատասխանեցին իրեն, թէ Քամամիւլ ըսուածը անկարեւոր տեղ մըն էր, պառօնը կը յամառէր իր գաղափարին վրայ . եւ հաշտութիւնը ա'յն ատեն միայն գոյացաւ, երբ իրաւունք տուին իրեն :

Կը կարծեմ սակայն թէ սրտտես նաւապետը անո՛ր համար դիւրաւ տեղի տուաւ, որովհետեւ կատարելապէս համոզուած էր այլեւս թէ մօտալուսէ էր մեծ պատահար մը որ իր օձիքը պիտի աղատէր ազնուատոհմ ուղեւորին ձեռքէն : Ուստի որոշուեցաւ որ կարճ միջոց մը կանգ պիտի առնէր Քամամիւլի առջեւ ուր հասանք միջօրէէն յետոյ ժամ երեքին :

— Կուղէ՞ք ինծի ընկերանալ՝ քաղաքը այցելելու համար, հարցուց ինծի պառօնը, մինչ իր կինը եւ երկու նաւաստիներ տեղաւորուած էին արդէն շոգեշարժ մակոյկին մէջ :

Իր հրաւերը ընդունեցի եւ Պ. տը կռավալ ըսաւ թէ լաւագոյն եղաւ այսպէս, որպէս զի կարենայի իր ինքնութիւնը հաստատել մեր թուղթերուն վաւերացման առթիւ : Եւ արդարեւ, իր նպատակն էր *viser* ընել տալ նաւուն եւ ուղեւորներուն վերաբերեալ պաշտօնական թուղթերը եւ զանոնք առած էր նաւապետէն որ յանձնած էր՝ դէմքը թթուեցնելով :

— Ուշադրութի՛ւն, տօքթէօ, ըսաւ ինծի այս վերջինը . վաւերագրերս իրեն յանձնեցի, բայց բոլորովին ապահով չեմ :

Երբ մեր մակոյկը բաժնուեցաւ Քալաքիւնէն, դժուար եղաւ մեզի՝ ո՛ր կողմ երթալիքնիս որոշել : Պառօնը, որ կարուկ որոշումներ տալու սովոր էր, յայտարարեց թէ առաջնորդի մը պէտք ունինք եւ մեր ձախակողմը նշմարուող փոքրիկ կղզի մը ցոյց տալով, դէպի այն կողմ ուղղեց դէկը : Քա. նի մը ձկնորսներ կերեւային հոն, նաւակնե. րու մէջ : Անոնցմէ մէկը, պղտիկ մարդ մը, կանանչորակ գոյնով, սկսաւ խօսակցիլ հետերնիս, եթէ երբեք կրնայ այսպէս կոչուիլ այն խառնակ լեզուն որով մեր գաղափարները փոխանակեցինք : Պառօնուհին, ըրթութիւնը լեզուի բառգիրք մը բռնած էր ձեռքը և մեզմէ ամէն մէկը կտոր քրդուճ լատինե. րէն, իտալերէն և նոյն իսկ յունարէն բառեր արտասանելով, վերջապէս յաջողեցանք համոզել այս մարդը մեզ ուղեկցելու, մեր մակոյկին մէջ, դէպի Քամամիւլ որ գեղատեսիլ գետաբերանի մը խորը կը գտնուէր :

(Շարունակելի)

ՄԱՍԻՍԻ նախորդ թիւով հրատարակուած Ռ. Յ. Պէրպէրեան էֆ. ի «Դարձեալ Կօնքուններուն շուրջը» յօդուածին մէջ քանի մը վրիպակներ սպրդած են : Էջ 146, սիւնակ Ա., տող 36րդ՝ «կշուած» պիտի կարդացուի «կշռուած» եւ էջ 148, սիւնակ Ա., տող 18րդ՝ «կեղծած» պիտի չարդացուի «եղծած» :

ԳԻ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Գ Ե Ք Ս Ե Մ Ա Ն Ի

Ընտիր հաւաքածոյ մը կրօնային բանաստեղծութիւններու : Գին 6 ղրշ. :

Կեդրոնատեղին է Կ. Պոլիս, Յ. Մատթէոսեան Թղթավաճառանոցը, Յինճանճըաթ Եօքուշու, թիւ 27 : Կը գտնուի նաեւ Պ. Պալենց գրատունը, Չաքմաքճըլար, թիւ 21 : Եւ հեղինակին քով, ի Թարսուս, Տարսոս Գօլէճ : 4—10

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տէր եւ Տնօրէն—ՏՈՒԹ. ԵԴՈՒԱՐԻ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԿ Օրագրի



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ. ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուղարկող արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութեան երկ' ընդունի
ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ,

ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կառավարուն դէմ:

Ընկերութեան դրամագումարը, ամբողջապէս վճարուած

10,666,666 Քրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 *

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-
գումարն եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ դանձուած ապահովագրին եւ տոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան
խան, Վոյվոտա, Ղալա թիւ, 1-10

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հէրճուի վաճառատունը՝ գտնարեղեններու, ոսկի եւ արծաթ չգործուած, զարդանք
պատի եւ քոնսլի ժաւացոյցներու մասնաւոր վաճառութեն զատ, իր սաղ աշխատանքներ
խորդներուն վաճառութենէն քաջալերուած՝ այս անգամ կը փութայ յայտարարել թէ
մէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատշաճ ունի տարւոյ, կանանց
եւ աղայոց համար մէն տեսակ հագուանքն ու անձնակի հագուածքն աւելցնելով վերաբերու-
նք, նաեւ ճերմակեղեններ, ֆանթեզիներ եւ Թափեղներ ու տեքսթիլայն կոշիկներ, Ունի
նաեւ կանկարաւոր, ձեղձունի լամպաններ, մանուկային, եւսպանի ու անգլիական դար-
գեր, գեանի մաշկապանք, կրամօֆոններ ու պիտիքլեթներ՝ ամենավերջին կառարարու-
թիւններով:

Հէրճուի վաճառատունը իրականապէս ու լաւօրէն չափած է հանրութեան
վաճառութիւնը եւ գտնարեղեններ իր ապրանքներուն աշխատութեան եւ ոսկիներու
մաքրութեան, ձեւաւորութեան եւ աճանքութեան համար:

Ա. ամէնուն արդեաւ արժէքին վաճառումն է

Ա. Պ. Ա. Պ. Ա. Պ. Ա.

Միայն թէ գնաւոր ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկ մնացեալ գումարին հա-
մար շաբաթօրէն հարիւրին 5 վճարմամբ պարտաւ է հալթաթիւ:

Վաճառատունն հաստատուած է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ. ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵՄ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Ահա՛ զի այսպիսի բաւական է հաճախելու համար թէ՛ Հէրճուի անկողին կազմ
մակերպութեամբ յի վիճակի է այսօր գտնուելու իր ամենէն դժուարեան յաճախորդները:
Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:

Ասկարկուքիւն չկայ:

Շաբաթօրէն վճարմանը համար հաշուարկներ միշտ պարտաւ են:

ՆԱԶԱՐԷԹ ԽԱԶԵՐԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մաքրունքրաք, Պաքնաքան խան
թիւ 26

Ամէն կարգի դատեր կը ստանանէ եւ ինչորոյ աւարկայ եղած դործերու համար թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ, կը խմբագրէ եւ կը թարգմանէ դատերու եւ առեւտրական ու սովորական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր: Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձգիաբար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ:

Ապահովագրական դործառնութիւններու եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող տեղեկութիւնները ձգիաբար կուտայ:


Կը լսեն ձեռքարե օր մինչեւ օր այս մասին կը, բնութիւնը եղած տեղեկութիւնները իրմէ չտուայ, ապահովագրութիւն չի ստորագրուի: Ապահովագրական միասնաց հասուցման գույմարներու եւ փոխարժէքներու գանձումներ կը ստանանէ: 8—10

Դ Ե Ր Զ Ա Կ

Վ Ի Զ Ե Ն Ա Լ Ա Ճ Ա Ե Ա Ն

Չալաքիա, Հաքանքը փողոց թիւ 13

Լու տեսնի կերպաներով ու ձեւաւոր հագուստ պատրաստել առաջ ուղղուողը, որոնք միանգամայն ստանութիւն կը փնտրեն եւ վճարման դիւրին պայմաններ, կըրնան դիմել այս նոր բացուած խանութը, եւ մեծապէս դո՛ւ պիտի մնան: 8—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենեակ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեղակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռ քի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՆՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻԻՏԱՐ

Չարշը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաւիաւորութիւն։

Մասնահիւրեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը։

1—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զոտ, մաշկաբանութեան եւ երկար օտարէններէ վեր կը դարմանէ ռումբօքի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջրային ակարութիւնները, հին եւ նոր գաղտկան ախտերը։ Այս վերջին ախտերը առանց ռումբօքի խոնգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ։

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը 2-րեքշաբթի օրերը միայն ձրի։ 1—10

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Արածց եւ կռնանց ճաշակաւոր հոգեւորութեան Պօլիս, Սուլթան—Համամ, Միւսիլի Դրամատան դէմ Թիւ 58։

Սոյն վաճառատան մէջ գտնուած ազգայնական, արածց եւ կռնանց յաւաք հոգեւորներ, իրենց զեղեցիկութեան կը միացնեն ազգայնական, եւ դիւրամատչելի գրեթե առաւելութիւնն ալ կ'ընծայեն հոգեւորական։

Առաջ վարդապետ մեծապէս գործած է իր բազմաթիւ յաճութեանները։ 1—10